



Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ
ՔՈՐԴՈՄ ԱՐԲԵՊԻՍԿՈՍՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Առաջնորդ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016 * MURRAY HILL 6-0710

Archbishop Corkum Mamogian, Primate

Թիւ 22864
Փետրուար 23, 1971

Արժանաշնորհ
Տ. Վրթանէս Բհնյ. Գալայժեան
Հովիւ Ս. Խաչ Հայց. Եկեղեցւոյ
եւ Նախագահ Ժիական Խորհուրդի
Եռւնիըն Սիթի.

Սիրելի Տէր Վրթանէս,

Ստացած ենք 1971 Փետրուար 13 թուակիր 2եր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ 2եր Նախագահութեամբ՝ Յունուար 31ին գումարուած 2եր Ժիական Ժողովին մէջ կատարուած է Ժիական Խորհուրդի վեց անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ 2եր Ժիական Ժողովը տեղի ունեցած է Թեմական Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք Ժիական Խորհուրդի անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան ղրկել Ժիական Խորհուրդի նորընտիր Իլանի անդամոց եւ Եկեղեցւոյ բնթակայ մարմիններու ատենապետներուն անունը, հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Օրհնելով Ժիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք 2եզի եւ 2եր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ՔՈՐԴՈՄ ԱՐԲԵՊԻՍԿՈՍՈՍ
Առաջնորդ

Տիարք՝ Տիրան Զօփուրեան
Նուպար Տօրեան
Լըտ Շաֆազեան
Պարթ Սարգիսեան
Զարլգ Գէնժեան
Լիոն Պօղոսեան